# ՀՀ ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԶԳԵՍՏԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՔԾ-ԳՀԱՊՁԲ-ՀԱՄ-20/1/1

ք. Երևան «14» հոկտեմբերի 2020թ.

ՀՀ Հատուկ քննչական ծառայությունն, ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունների կատարող Վ.Հակոբյանի, որը գործում է ՀՀ հատուկ քննչական ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Ազատյանի, որը գործում է «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող իր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **5 553 666** (հինգ միլիոն հինգ հարյուր հիսուներեք հազար վեց հարյուր վաթսունվեց) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 4 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| **ՀՀ Հատուկ քննչական ծառայություն** | **«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ** |
| **ք.Երևան Վ.Վաղարշյան 13ա** | **ք. Երևան Սարկավագի 157** |
| **Ֆին. նախ. գործառնական վարչություն** | **"Արարատբանկ" ԲԲԸ** |
| **Հ/Հ 900011001022** | **Հ/Հ 1510023294810100** |
| **ՀՎՀՀ 02589128** | **ՀՎՀՀ 00803554** |
| **Գլխավոր քարտուղարի պարտականությունների կատարող** | **Տնօրեն** |
| **Վ.Հակոբյան** | **Ա. Ազատյան** |
| ------------------------ (ստորագրություն) | ------------------------ (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

Հավելված
«14» հոկտեմբերի 2020թ. կնքված
ՀՔԾ-ԳՀԱՊՁԲ-ՀԱՄ-20/1/1 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Ապրանքի անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման հասցեն | ենթակա քանակը | ժամկետը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 5. | 18231410/8 | կիտել – տաբատ | Կիտել-Տաբատ (տոնական)՝ (բարձրագույն դասային աստիճան ունեցող ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց համար): Կիտելը երկկոճկյուն, երկփեղանի բաց մոխրագույն 67% բուրդ, 33% Պ/է 317գր/մ2 խտությամբ կտորից, մարմինը կիսագրկող մակերեսով, հետ ծալած օձիքով, օձիքի եզրերը մշակված են կարմիր մահուդե եզրագծով, օձիքի վրա ասեղնագործվում է ոսկեգույն թելով ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց համար նախատեսված եզրազարդի խորհրդանշանը (N 3 ձև, նկար 12): Կիտելի 2 փեշերի վրա ուղղանկյուն կափույրով ներկարված գրպաններ են: Թևքերը երկկարանի են, թիկունքն ամբողջական է՝ երկու կողային բացվածքով: Ձախ թևի ուսակարից 90 մմ ներքև ջակարդե ՀՔԾ թևքանշանն է: Աստառը մոխրագույն մետաքսե, ծոցագրպանով: Բարձրագույն դասային աստիճան ունեցող ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց համար՝ երկկոճկյուն (երկփեղկ)՝ 6 ոսկեգույն մեծ կոճակներով է, որոնք տեղադրված են երկշարք: Օձիքի վրա ասեղնագործվում է ոսկեգույն թելով ՀՀ հատուկ քննչական ծառայությունում բարձրագույն դասային աստիճան ունեցող ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց համար նախատեսված եզրազարդի խորհրդանշանը (N 3 ձև, | լրակազմ | 249996 | 749988 | 3 | Վ. Վաղարշյան 13ա | 3 | Ապրանքի մատակարարման ժամկետը սահմանվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող 22-րդ օրացուցային օրը |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | նկար 13): Ձախ թևի ուսակարից 90 մմ ներքև ջակարդե ՀՀ զինանշանով թևքանշանն է, իսկ աջ թևի ուսակարից 90 մմ ներքև՝ ջակարդե ՀՔԾ թևքանշանը (N 9 ձև, նկար 1): Վրանկար ուսադիրներ՝ ոսկեգույն դաշտով, կարմիր գույնի մակաշերտով և զոլերով՝ տոնական համազգեստի համար (N 1 ձև, նկար 1): Տաբատը՝ մուգ կապույտ գույնի կտորից, 67% բուրդ, կտորը 33% Պ/Է, 317 գր/մ², ուրվագիծը՝ ուղիղ, կողային կարերով անցնում է կարմիր գույնի 1 եզրագիծ՝ 1.5-ից 2 մմ լայնությամբ: Գոտին՝ կամրջակներով: Կոճկվում է կոճակով, մետաղյա կեռիկով և շղթայով: Կողային գրպանները թեք են, հետնամասի աջ կողմում կոճակով կոճկվող կափույրով ներկարված գրպան: Առջամասը մինչև ծնկները մետաքսյա աստառով (N 9 ձև, նկար 2, 3): Բարձրագույն դասային աստիճան ունեցող ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց համար կողային կարերով անցնում է կարմիր գույնի 3 եզրագիծ, 2-ը՝ 2 սմ լայնությամբ, իսկ մեջտեղինը՝ 1,5-ից 2 մմ (N 9 ձև, նկար 1): | | | | | | |
| 6. | 18231410/7 | կիտել – տաբատ | Կիտել-Տաբատ (տոնական)՝ (արդարադատության երրորդ դասի խորհրդականից մինչև արդարադատության առաջին դասի խորհրդականի համար): Կիտելը երկկոճկուն, երկփեղանի բաց մոխրագույն 67% բուրդ, 33% Պ/Է 317 գր/մ² խտությամբ կտորից, մարմինը կիսագրկող մակերեսով, հետ ծալած օձիքով, օձիքի եզրերը մշակված են կարմիր մահուդե եզրագծով, օձիքի վրա ասեղնագործվում է ոսկեգույն թելով ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց համար նախատեսված եզրազարդի խորհրդանշանը (N 3 ձև, նկար 12): Կիտելի 2 փեշերի վրա ուղղանկյուն կափույրով ներկարված գրպաններ են: Թևքերը երկկարանի են, թիկունքն ամբողջական է՝ երկու կողային բացվածքով: Ձախ թևի ուսակարից 90 մմ ներքև ջակարդե ՀՔԾ թևքանշանն է: Աստառը մոխրագույն մետաքսե, ծոցագրպանով: Արդարադատության երրորդ դասի խորհրդականից մինչև արդարադատության առաջին դասի խորհրդականի դասային աստիճան ունեցող ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց համար երկկոճկուն (երկփեղկ)՝ 6 ոսկեգույն մեծ կոճակներով է, որոնք տեղադրված են երկշարք (N 9 ձև, նկար 2): Վրանկար ուսադիրներ՝ ոսկեգույն դաշտով, կարմիր գույնի մակաշերտով և զոլերով՝ տոնական համազգեստի համար (N 1 ձև, նկար 1): Տաբատը ՝ մուգ կապույտ գույնի կտորից, կտորը (67% բուրդ, 33% Պ/Է 317 գր/մ²), ուրվագիծը՝ ուղիղ, կողային կարերով անցնում | լրակազմ | 79998 | 2479938 | 31 | Վ.Վաղարշյան 13ա | 31 | Ապրանքի մատակարարման ժամկետը սահմանվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող 22-րդ օրացուցային օրը |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | է կարմիր գույնի 1 եզրագիծ՝ 1.5-ից 2 մմ լայնությամբ: Գոտին՝ կամրջակներով: Կոճկվում է կոճակով, մետաղյա կեռիկով և շղթայով: Կողային գրպանները թեք են, հետնամասի աջ կողմում կոճակով կոճկվող կափույրով ներկարված գրպան: Առաջամասը մինչև ծնկները մետաքսյա աստառով (N 9 ձև, նկար 2, 3): | | | | | | |
| 7. | 18231410/9 | կիտել – տաբատ<br>- | Կիտել-Տաբատ (տոնական)՝ (երրորդ դասի խորհրդականից մինչև առաջին դասի խորհրդականի համար): Կիտելը միակոճկուն, միափեղկանի բաց մոխրագույն 67% բուրդ, 33% Պ/Է 317 գր/մ$^2$ խտությամբ կտորից, մարմինը կիսագրկող մակերեսով, հետ ծալած օձիքով, օձիքի եզրերը մշակված են կարմիր մահուդե եզրագծով, օձիքի վրա ասեղնագործվում է ոսկեգույն թելով << հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց համար նախատեսված եզրազարդի խորհրդանշանը (N 3 ձև, նկար 12): Կիտելի 2 փեշերի վրա ուղղանկյուն կափույրով ներկարված գրպաններ են: Թևքերը երկկարանի են, թիկունքն ամբողջական է՝ երկու կողային բացվածքով: Ձախ թևի ուսակարից 90 մմ ներքև ջակարդե ՀՔԾ թևքանշանն է: Աստառը մոխրագույն մետաքսե, ծոցագրպանով: Երրորդ դասի խորհրդականից մինչև առաջին դասի խորհրդականի դասային աստիճան ունեցող ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց համար միակոճկուն, միաշարք երեք ոսկեգույն մեծ կոճակներով է (N 9 ձև, նկար 3): Վրանկար ուսադիրներ՝ ոսկեգույն դաշտով, կարմիր գույնի մակաշերտով և զոլերով՝ տոնական համազգեստի համար (N 1 ձև, նկար 1): Տաբատը ՝ մուգ կապույտ գույնի կտորից, կտորը (67% բուրդ, 33% Պ/Է 317 գր/մ$^2$), ուրվագիծը՝ ուղիղ, կողային կարերով անցնում է կարմիր գույնի 1 եզրագիծ՝ 1.5-ից 2 մմ լայնությամբ: Գոտին՝ կամրջակներով: Կոճկվում է կոճակով, մետաղյա կեռիկով և շղթայով: Կողային գրպանները թեք են, հետնամասի աջ կողմում կոճակով կոճկվող կափույրով ներկարված գրպան: Առաջամասը մինչև ծնկները մետաքսյա աստառով (N 9 ձև, նկար 2, 3): | լրակազմ | 78000 | 546000 | 7 | Վ.Վաղարշյան 13ա | 7 | Ապրանքի մատակարարման ժամկետը սահմանվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող 22-րդ օրացուցային օրը |
| 8. | 18231210/2 | կիտել – կիսաշրջազգեստ | Կիտել–կիսաշրջազգեստ (տոնական)՝ (երրորդ դասի խորհրդականից մինչև առաջին դասի խորհրդականի համար): Կիտելը միակոճկուն, միափեղկանի բաց մոխրագույն 67% բուրդ, 33% Պ/Է 317 գր/մ$^2$ խտությամբ կտորից, մարմինը կիսագրկող մակերեսով, հետ ծալած օձիքով, օձիքի եզրերը մշակված են կարմիր մահուդե եզրագծով, օձիքի վրա ասեղնագործվում է ոսկեգույն | լրակազմ | 78000 | 78000 | 1 | Վ.Վաղարշյան 13ա | 1 | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | թելով ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց համար նախատեսված եզրազարդի խորհրդանշանը (N 3 ձև, նկար 12): Կիտելի 2 փեշերի վրա ուղղանկյուն կափույրով ներկարված գրպաններ են: Թևքերը երկկարանի են, թիկունքն ամբողջական է՝ երկու կողային բացվածքով: Ձախ թևի ուսակարից 90 մմ ներքև ջակարդե ՀՔԾ թևքանշանն է: Աստառը մոխրագույն մետաքսե, ծոցագրպանով: Երրորդ դասի խորհրդականից մինչև առաջին դասի խորհրդականի դասային աստիճան ունեցող ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց համար միակոճկուն, միաշարք երեք ոսկեգույն մեծ կոճակներով է (N 9 ձև, նկար 6): Վրանկար ուսադիրներ՝ ոսկեգույն դաշտով, կարմիր գույնի մակաշերտով և զոլերով՝ տոնական համազգեստի համար (N 1 ձև, նկար 1): Կիսաշրջազգեստը մուգ կապույտ կիսաբրդյա (արտ.2311, 317 գ/մ² խտությամբ 67% բուրդ, 33% Պ/Է) կտորից, ուղիղ կարվածքով, երկկողմանի սեղմոններով, աստառով, գոտին՝ գոտեմակոցերով, հետևամասում՝ բացվածքով, կողամասում կոճկվում է մեկ կոճակով և շղթայով (N 9 ձև, նկար 4, 5, 6): ուղիղ կարվածքով, երկկողմանի սեղմոններով, աստառով, գոտին՝ գոտեմակոցերով, հետևամասում՝ բացվածքով, կողամասում կոճկվում է մեկ կոճակով և շղթայով: | | | | | | | Ապրանքի մատակարարման ժամկետը սահմանվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող 22-րդ օրացուցային օրը |
| 13. | 18331200/4 | Վերնաշապիկներ | Վերնաշապիկ՝ երկարաթև՝ սպիտակ կտորից,(արտ, 175 գ/մ² խտությամբ 33% վիսկոզա, 67% գ/մ²) ծալովի օձիքով, վերնաշապիկի օձիքի անկյուններում տեղադրված են պլաստիկ ներդիրներ: Լանջափեշերը կոճկվում է 8 կոճակով, վերին կենտրոնական ուղղահայաց ծալվածքով և կափույրով վրադիր գրպաններով: Վերնաշապիկի թիկնամասը կոկետկայով, ուղիղ գոտիով, կողամասերը էլաստիկ ժապավենով ձգված: Թևերը ներկարված բազկակալներով և կոճկվող բացվածքներով: Ուսադիրների ամրացման համար ուսակարերի շրջանում երկու կամրջակներ և երեք փակօղակներ են: Գրպանների կափույրների և բազկակալների կոճակները 14 մմ, մնացածը՝ 11 մմ երկու անցքով: Ձախ թևի ուսակարից 90 մմ ներքև ջակարդե ՀՔԾ թևքանշանն է (N 10 ձև, նկար 2): Բարձրագույն դասային աստիճան ունեցող ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց համար ձախ թևի ուսակարից 90 մմ ներքև ջակարդե ՀՀ զինանշանով թևքանշանն է, իսկ աջ թևի ուսակարից 90 մմ ներքև ջակարդե ՀՔԾ թևքանշանը (N 10 ձև, նկար 1): | հատ | 6000 | 252000 | 42 | Վ.Վաղարշյան 13ա | 42 | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 15. | 18331300/2 | պոլո շապիկ ներ | Վերնաշապիկ (պոլո շապիկ)՝ կարճաթև՝ ձևով և գույնով նման է սույն հավելվածի 3-րդ կետի 7-րդ ենթակետով նկարագրված կարճաթև վերնաշապիկին՝ պոլո շապիկին (N 8 ձև, նկար 6): Բարձրագույն դասային աստիճան ունեցող ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց համար՝ ձախ թևի ուսակարից 90 մմ ներքև ջակարդե ՀՀ զինանշանով թևքանշանն է, իսկ աջ թևի ուսակարից 90 մմ ներքև ջակարդե ՀՔԾ թևքանշանը: Սվիտեր կարճաթև /ՊՈԼՈ/ Շապիկը բաց երկնագույն գործվածքից է (100 տոկոս բամբակյա, 180 գր/մ$^2$ տրիկոտաժե «Պիկե»), օձիքը՝ ծալովի, կրծքամասում՝ 3 կոճակ, կարճաթև (եզրամասը՝ թեզանիքով): Պատրաստվում է մոխրագույն 100% բամբակ, 220 գր/մ$^2$ խտությամբ կտորից, խիտ գործվածքով, ունի ուսադիր-ների համար նախատեսված լեզվակ, կոշտ օձիքով: Առջևի մասում ունի բացվածք, որը կոճկվում է 3 բաց մոխրագույն կոճակներով: Ձախ կրծքավանդակի վրա առկա է վրադիր՝ նույն գույն կտորից՝ 14.5x12սմ չափսերով, կափույրով, բաց մոխրագույն կոճակով կոճկվող գրպան: Ուսադիրների մասը կարված է նույն կտորից: | հատ | 5496 | 461664 | 84 | Վ.Վաղարշ յան 13ա | 84 | Այրանքի մատակարար ման ժամկետը սահմանվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականու թյունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող 22-րդ օրացուցային օրը |
| 18. | 18231600/2 | սվիտեր - ներ | Սվիտերները մոխրագույն գործվածքից 50% բամբակ, 50% ակրիլ, 300 գր/մ$^2$ խտությամբ: Օձիքը՝ շրջանաձև բացվածքով, հավաքովի գործվածքով: Ձախ կրծքավանդակին առկա է շերտակարով, վրադիր կափույրով, կոճկվող գրպան: Ունի ուսադիրների համար նախատեսված լեզվակ: Ուսադիրները կտորից են՝ հանովի, մեկ կոճակով կոճկվող: Գրպանի և ուսադիրների լեզվակի կոճակները մետաղական են՝ մուգ մոխրագույն: Ձախ թևի ուսակարից 90 մմ ներքև ջակարդե ՀՔԾ թևքանշանն է (N 11 ձև, նկար 3): Բարձրագույն դասային աստիճան ունեցող ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց համար՝ ձախ թևի ուսակարից 90 մմ ներքև ջակարդե ՀՀ զինանշանով թևքանշանն է, իսկ աջ թևի ուսակարից 90 մմ ներքև ջակարդե ՀՔԾ թևքանշանը: | հատ | 7998 | 671832 | 84 | Վ.Վաղարշ յան 13ա | 84 | |
| 19. | 35811190/2 | Ուսա դիր | Մոխրագույն դաշտով և զոլերով, իսկ բարձրագույն դասային աստիճան ունեցող ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց համար նաև կարմիր մակաշերտով (N 2 ձև, նկար 1): | զույգ | 996 | 167328 | 168 | Վ.Վաղարշ յան 13ա | 168 | Այրանքի մատակարար ման ժամկետը սահմանվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականու թյունների |
| 20. | 18421120/3 | Փողկապ ներ | Փողկապ՝ մուգ կապույտ գույնի, ունի լայնացած ուղղագծով ձևվածք, ավարտվում է ներքևում սուր անկյունով, վերևում՝ մշտական հանգույցով: Օձիքի տակ ամրանում է էլաստիկ ժապավենով և ամրակով: Փողկապի վրա ասեղնագործված է ՀՀ զինանշանը (N 7 | հատ | 3498 | 146916 | 42 | Վ.Վաղարշ յան 13ա | 42 | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ձև, նկար 1): Մուգ կապույտ գույնի,(արտ.2362, 35% բուրդ,65% պ/է, 294գր.քմ խտությամբ) ունի լայնացած ուղվագծով ձևվածք: Պատրաստի տեսքն ավարտվում է ներքևում սուր անկյունով, վերևում՝ մշտական հանգույցով: Օձիքի տակ ամրանում է էլաստիկ ժապավենով և ամրակով: Բարձրագույն կոչում ունեցող ծառայողների փողկապի վրա ասեղնագործված է Հայաստանի Հանրապետության զինանշանը: Փողկապը ունի ամրակ՝ երկձյուղանի մետաղյա ոսկեգույն շերտիկ: | | | | | | | կա[illegible] պայմանա[illegible] մեջ մտնելու օրվան հաջորդող 22-րդ օրացուցային օրը |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**ՀՀ Հատուկ քննչական ծառայություն**
**ք.Երևան Վ.Վաղարշյան 13ա**
**Ֆին. նախ. գործառնական վարչություն**
**Հ/Հ 900011001022**
**ՀՎՀՀ 02589128**
**Գլխավոր քարտուղարի**
**պարտականությունների կատարող**
**Վ.Հակոբյան**

---------------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

**«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ**
**ք. Երևան Սարկավագի 157**
**"Արարատբանկ" ԲԲԸ**
**Հ/Հ 1510023294810100**
**ՀՎՀՀ 00803554**
**Տնօրեն**
**Ա. Ազատյան**

---------------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20  թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 5 | 18231410/8 | կիտել – տաբատ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 749988 | 749988 | 749988 | 749988 |
| 6 | 18231410/7 | կիտել – տաբատ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 2479938 | 2479938 | 2479938 | 2479938 |
| 7 | 18231410/9 | կիտել – տաբատ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 546000 | 546000 | 546000 | 546000 |
| 8 | 18231210/2 | կիտել – կիսաշրջազգեստ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 78000 | 78000 | 78000 | 78000 |
| 13 | 18331200/4 | վերնաշապիկներ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 252000 | 252000 | 252000 | 252000 |
| 15 | 18331300/2 | պոլո շապիկներ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 461664 | 461664 | 461664 | 461664 |
| 18 | 18231600/2 | սվիտերներ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 671832 | 671832 | 671832 | 671832 |
| 19 | 35811190/2 | ուսադիր | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 167328 | 167328 | 167328 | 167328 |
| 20 | 18421120/3 | փողկապներ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 146916 | 146916 | 146916 | 146916 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ Հատուկ քննչական ծառայություն
ք.Երևան Վ.Վաղարշյան 13ա
Ֆին. նախ. գործառնական վարչություն
Հ/Հ 900011001022
ՀՎՀՀ 02589128
Գլխավոր քարտուղարի
պարտականությունների կատարող
Վ.Հակոբյան

---------------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ
ք. Երևան Սարկավագի 157
"Արարատբանկ" ԲԲԸ
Հ/Հ 1510023294810100
ՀՎՀՀ 00803554
Տնօրեն
Ա. Ազատյան

---------------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 3
« » հոկտեմբերի 2020թ. կնքված
ՀՔԾ-ԳՀԱՊՁԲ-ՀԱՄ-20/1/1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
______________________
______________________
գտնվելու վայրը ______________
հհ ______________________
հվհհ ______________________

Պատվիրատու
______________________
______________________
գտնվելու վայրը ______________
հհ______________________
հվհհ______________________

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
______________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին. Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց
______________________
ստորագրություն
______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ապրանքը ընդունեց
______________________
ստորագրություն
______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«   » հոկտեմբերի 2020թ. կնքված*
*ՀՔԾ-ԳՀԱՊՁԲ-ՀԱՄ-20/1/1 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N ______
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Գնորդ) և ______________ _________

Գնորդի անվանումը                Վաճառողի անվանումը

(այսուհետ՝ Վաճառող) միջև 20   թ. ____________________-ին կնքված N ________________
պայմանագրի կնքման ամսաթիվը   պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ________________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**                **Ընդունեց**
ներկայացուցիչ՝                հայտը նախագծած

______________________                ______________________
ազգանուն, անուն                ազգանուն, անուն

______________________                ______________________
Ստորագրություն                ստորագրություն